

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի համայնքապետարանը տեղեկացնում է, որ 2020 թ. հոկտեմբերի 19-ին, ժամը՝ 11:00, Մալիշկայի համայնքապետարանում (հասցեն՝ Մալիշկա, 1փող. 1շ.) տեղի կունենա համայնքային սեփականություն հանդիսացող հողի վարձակալության նպատակով մրցույթ

Հողավանդակ 1

(0.16101 հա հողամասը /ծածկագիր 10-032-0274-0062/ նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր): ժամկետը՝ 25 տարի:

Մեկնարկային գինը՝ հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է մրցույթի նախորդող երրորդ օրը, հոկտեմբերի 13-ին, ժամը՝ 18.00:

Հայտ կարող են ներկայացնել ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք իրենց հետ կունենան անձնագիր, իսկ իրավաբանական անձինք՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները և լիազորությունները հաստատող փաստաթղթերը: Հայտի ներկայացման համար անհրաժեշտ է վճարել 5000 ՀՀ դրամ տեղական վճար, 5000 ՀՀ դրամ վարձակալությամբ տրամադրելու փաթեթի նախապատրաստման համար և նախավճար՝ լոտի 5%-ի չափով մրցույթի օրը:

Վճարում կարող էք կատարել ինչպես կանխիկ՝ Մալիշկայի համայնքապետարանի հաշվապահություն, այնպես էլ անկանխիկ հետևյալ հաշվեհամարին՝

-տեղական վճարի վճարման հաշվեհամարն է՝ 900355119166 Կենտրոնական գանձապետարան,

-նախավճարի վճարման հաշվեհամարն է՝ 900355119109 Կենտրոնական գանձապետարան:

Աճուրդում չհաղթած մասնակցին մուծված նախավճարի չափը վերադարձվում է տեղում՝ գրավոր դիմելուց հետո:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել համայնքապետարան, հեռ. (+374) 93 18 90 64 (Մամվել Այվազյան):

18.09.2020թ